

Մի հատուած Ռոտզենէսի զրուածներէց եւ
 .Պատճառ լայն եւ նուրբ զրոց . ձեռագիրը:

• Երարատի անցեալ համարում Գրի-
 գար Աբաշէլագործի մասին խօսելով յիշել
 էինք, որ նորա ուսուցիչն է եղել ժամանա-
 կի ամենանշանաւոր քրիստոնեայ գիտնական
 Ռոտզենէսը: Սա ծնուած է 185 — 186 թու-
 ականներին Աղեքսանդրիա քաղաքում: քրիս-
 տանեայ ծնօններից: Հայրը Լեոնիդաս, մի
 ունեւոր և բարեպաշտ անձն, իւր սրգուն
 մտնուկ հաստակում քրիստոնէական գաստի-
 տրակութիւն տալուց յետոյ նահատակուե-
 ցաւ Սեպտիմոս Սեբրոսի (193—211) հանած
 հալածանքի ժամանակ և դասուեցաւ այս-
 պիսով քրիստոնէութեան ամենահին սուր-
 բերի կարգը: Այդ միջոցին Աղեքսանդրիա-
 յում ծաղկում էր կատեխետների գպրոցը,
 քրիստոնեայ աշխարհի ամենահին և ամե-
 նազդեցիկ ուսումնաւարներից մէկը: որ ինչ-
 պէս անունը ցոյց է տալիս հեթանոսու-
 թիւնից դարձածներին քրիստոնէական գի-
 տելիքներ հաղորդելու նպատակով բացու-
 ած՝ հեազհետէ ժամանակակից գիտութեան
 բարձրագոյն հանդիսարան դարձաւ: հեթա-
 նոս փիլիսոփաներին գիտութեան զէնքով
 քրիստոնէական ճշմարտութիւնը յայտնի կա-
 ցուցանելու միջոց ընձեռելով: Զարմանալի
 ընդունակութեան տէր և անչափ ուսում-
 նատենչ Ռոտզենէսը դպրոցի իսկական հիմ-
 նադիրներն՝ Պանթենոսի և Կղեմէս Աղեք-
 սանդրացու ձեռքի տակ կրթուեցաւ և դեռ
 18 տարեկան հասակում ուսուցանել սկսե-
 լով այս դպրոցի ամենամեծ ներկայացուցի-
 ջը հանգիստացաւ: Միևնոյն ժամանակ յարա-
 բերութիւն էր պահպանում նա հեթանոս
 գիտնականների հետ և մանաւանդ նոր պղա-
 տոնական փիլիսոփայութեան հիմնադիր Ամ-
 մոնիոս Զակրասի ազդեցութեան ներքոյ խո-
 բասուղուում յունական փիլիսոփայութեան
 գաղտնիքների մէջ: Այսպիսով նա այնպիսի
 ընդարձակ և բազմակողմանի [գիտութիւն
 ձեռք բերեց, որ նորա համբաւը նաև հեռու

տեղեր տարածուեցաւ: Աղեքսանդր Աւերոս
 կայսեր ուսումնասէր մայրը Յուլիա Մամէա
 նորան Անախը հրաւիրեց խօսակցելու նորա
 հետ աստուածաբանական խնդիրների վերայ,
 իսկ ծերութեան հասակում նամակագրու-
 թիւն ունէր նա քրիստոնէութեան համա-
 կիր Ֆիլիպպոս Արաբացի կայսեր և նորա կին
 Սեբրայէ հետ:

Մանկութիւնից ի վեր մեծ հակումն
 ունենալով դէպի ճգնական կեանքը, ինչպէս
 և մի բուն ձգտում քրիստոնէութեան հա-
 մար նահատակութիւն իսկ յանձն առնելու,
 Ռոտզենէս մի ծայրահեղ միջոցի է դիմում՝
 ներքինացնում է ինքն իրեն և այդ հանգա-
 մանքը գտնում է նորա մեծագոյն գժրաղ-
 ղութիւնների պատճառը: Երբ նորան Պա-
 զեստինում շնայած այս ծանր արգելքին և
 առանց Աղեքսանդրիոյ եպիսկոպոսի կամքը
 հարցնելու, քահանայ են ձեռնադրում վեր-
 ջինս, որ արգէն զայրացած էր նորա գէմ
 մի ժողովով բանադրում է նորան և կար-
 գազուրկ հրատարակում, որ և ընդունուում
 է շատ եկեղեցիների կողմից: Այնուհետև
 նա քաշուած կեանք է վարում Պազեստի-
 նիոյ կեսարիա քաղաքում: ուր և մի դպրոց
 է հիմնում և ուսուցանում այնտեղ մինչև
 իւր մահը: Մաքսիմիոս Թրակացու հանած
 հալածանքի ժամանակ նա ստիպուած էր
 խոյս տալ և մի քանի տարի թագստեան
 մէջ ապրել իսկ Կեղոսի օրով նա բռնուում
 և տանջանքի է ենթարկուում՝ միայն իւր
 մեծ համբաւի շնորհիւ մահից զերծ մնում:
 Ռոտզենէսի մահը տեղի ունեցաւ հաւանա-
 կնաարար 254 թ. ին:

Ռոտզենէս թէ իւր դպրոցից երած ա-
 շակերտների միջոցով և թէ մանաւանդ իւր
 սեփական գրուածներով ահագին ազդեցու-
 թիւն է գործել եկեղեցական գիտութեան
 զարգացման վերայ, չկայ գրեթէ մէկը հին
 եկեղեցւոյ նշանաւոր հայրերից, որ անմիջա-
 պէս կամ միջնորդաբար նորանից մի բան սո-
 վորած չինէր: Ամենից առաջ նա մեծ ծա-
 ույութիւն է մատուցել ս. Գրքի անվթար

պահպանութեան գործին իւր « շեքսապլա » կոչուած հսկայական գրուածքով, ուր նա երբայական բնագրի մօտ գէմ առ գէմ զըրել էր նոյն բնագիրը յունարէն գրերով և յունարէն չորս թարգմանութիւնները՝ ի թիւըս որոց և Եօթանասնից թարգմանութիւնը, մտրբելով այն որքան կարելի էր մինչև իւր ժամանակ ներս ստորած սխալներից: Ի հարկէ այսպիսի մի գրուածքից մի քանի օրինակ պատրաստել հեշտ բան չէր և երևի նա ոչ մի անգամ ամբողջապէս արտագրուած չլինելով մեր ձեռքը չէ հասել բացի Եօթանասնից թարգմանութիւնից, որ բազմաթիւ մնացորդների միջոցով վերականգնել կարելի է եղել: Ապա նա թողել է մեծ քանակութեամբ և բազմատեսակ մեկնարանական, դաւանաբանական, ջատագովական գրուածներ և թղթեր, որոնց թիւն ըստ աւանդութեան վեց հազարի է հասնում և նոցանից մեզ հասած մնացորդները ցոյց են տալիս, թէ այդ թիւը մեծ չափազանցութիւն չէ: Մեկնաբանական գրքուածները առաջին տեղն են բռնում նորագործների մէջ, որով և Որոգենէս քրիստոնեայ եկեղեցւոյ առաջին մեծ մեկնաբանն է հանդիսանում: Բայց պակաս նշանաւոր չէ նորա «Վասն Սկզբանց» դաւանաբանական գրուածքը, որով առաջին մեծ փորձն է եղել՝ բոլոր ատուածաբանական խնդիրները մի սիստեմի վերածել և մի ընդհանուր ըսկզբունքի ներքոյ նոցա համար լուծումն որոնել: Այս գրուածքի մէջ արծարծուած գաղափարները մեծ գեր են խաղացել Գ. Գ. և Ե. դարերի դաւանաբանական վէճերի մէջ և որովհետև Որոգենէս աւելի փիլիսոփայ էր քան բուն մտքով աստուածաբան, առաջնորդուել էր այնպիսի մի սկզբունքով, որի բուն հիմքը աւելի յոյն փիլիսոփայութեան քան Աւետարանի մէջ էր թաղուած և յայտնել էր շատ այնպիսի մտքեր, որոնց ուղղափառ գաւանդութեան հակառակ լինելը գնալով աւելի էր պարզում՝ նորա ամբողջ ուղղութիւնը շատ նշանաւոր հայրերի կողմից

ընդդիմութեան հանդիպելուց յետոյ վերջնականապէս դատապարտուեցաւ Յուստինիանոս Մեծի հրամանով 553 թուին. կազմուած ժողովում, որ Ե. տիեզերական ժողովէ կոչուում:

Այս համառօտ ակնարկից փոքր ի շատէ պարզ պէտք է լինի. թէ ինչքան նշանակութիւն ունի Որոգենէսի պէս մի անձնաորութեան երկերի ամեն մի հատուածը պատմական ուսումնասիրութեան համար: Հայր Զարբանալեանի յիշատակութիւնից երևում է* որ մեր ձեռագիրներում յայտնի են եղել մինչև այժմ միայն մի քանի հատուկտորներ նորան ընծայուած: Որոցանից փարիզի մատենադարանում գտնուածը ինքս աչքի եմ անցրել և ինչքան յիշում եմ անըրշան բաներ էին: Ներկայ համարում յառաջ ենք բերում մի հատուած, որի վաւերականութեան վերայ ինքն ըստ ինքեան կասկածելու տեղիք չկայ քանի որ ուրիշ աղբիւրներից էլ յայտնի է, թէ Որոգենէս եզեկիէլի մարգարէութեան մեկնութիւն գրել է և քանի որ ներկայ հատուածի մէջ աչքի ընկնող մեկնութեան այլաբանական սօճը և խորին հմտութիւնը Որոգենէսի համար արտայայտիչ յատկանիշներ են: Սակայն առանձնապէս ուշագրութեան արժանի է այստեղ արտայայտուած գաղափարը Մարիամ Աստուածածնի անխախտելի կուսութեան մասին, որ Ե. դարու սկզբներում միայն մի մեծ վէճի առիթ է եղել և որ նոյն Որոգենէսի մի ուրիշ գրուածքում այլ կերպ է բացատրուած: ** Մասնագէտներին է մնում որոշել, թէ արդեօք մեր հատուածի մէջ յայտնուած գաղափարը կարող է նրանք լինել:

Եզեկիէլի մեկնութիւնից յունարէն միայն մի փոքրիկ հատուած է յայտնի և 14 մեկնաբանական ճառեր նոյն մարգարէու-

* Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց. նր. 649. Վենետիկ. 1889:
 ** Տես. Real-Encyklopädie, Herzog und Plitt. 2. & Aufl. B. 9. p. 313.

Թեան վերաբերեալ լատիներէն թարգմանութեամբ,* որոնցից ոչ մէկը ինչքան ըստուգել կարող ենք, նոյն չէ մեր հատուածի հետ:

Մեզ մնում է այժմ մի քանի խօսք ասել այն ձեռագրի մասին, որից արտատրուած է ներկայ հատուածը: * Մայր ցուցակի հ. 1608 ձեռագիրն է այդ, որ իւր առաջին երեսում բնագրից տարբեր գրերով ունի հետևեալ վերնագիրը. «Պատճառ լայն և նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վարդապետաց, և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ բարունապետին Գրիգորի Արղւոյ Աբասայ. Քրիստոս Աստուած Մեսիայ և Մանուիէլն շնորհաւոր արասցէ զսայ վարդապետի խաչատրոյ»: Թէև գրքի վերջից թերթեր ընկած լինելով յիշատակարան և սպակասում է, բայց ինչպէս մէջի մէկ երկու յիշատակութիւններից երևում է, այս ձեռագրի ստացող խաչատուր վարդապետը ժե. գարու գրող կեչառուեցին է. ** իսկ թէ ո՞վ է գրուածքի հեղինակ Աբասի որդի Գրիգոր վարդապետը, այդ մասին երևի Հայր Զարբանաւեան ևս նոյնքան տեղեկութիւն ունի, որքան և մենք:*** Գրքի սկզբում հեղինակը մի փոքրիկ յառաջարան է դնում, բայց այդտեղ ոչ մի պատմական ծանօթութիւն չկայ իւր մասին: Զեռագրի մեծ մասը հին շղագրով է, բայց կան մի քանի կտորներ մանր երկաթագիր, որ աւելի հին են երևում և աւելի կարևոր գրչութիւն. կայ և մի թերթ նօտրագիր, որ ընկած թերթերից մէկին փոխարինում է և աւելացրած է երևի գիրքը վերջին անգամ կազմելու միջոցին:

Այս գիրքը իւր բովանդակութեամբ խիստ հետաքրքրական է նախ և առաջ այն պատճառով, որ նա ներկայացնում է մի փորձ

համառօտ ծանօթութիւն տալ Հին և Նոր կտակարանի բոլոր գրուածների ծագման և նշանակութեան մասին, այսինքն տալ մօտաւորապէս այն բանը, ինչ որ արդի աստուածաբանութեան մէջ Հին և Նոր կտակարանի ներածութիւն է կոչուում: Հեղինակն ամէն անգամ նախ ինքը իւր ունեցած տեղեկութիւնները գրի է առնում և ապա մէջ է բերում հատուածներ զանազան հարց գրուածներից (գլխաւորապէս Ասկիբերանից և Եփրեմից), որչափ այդ գրուածները մատչելի են իրեն և որչափ նա նոցա նպատակայարմար է գտնում: Արդեօք այս ձեռնարկութիւնը նա ինքնաբերաբար է սկսել, թէ արդէն պատրաստի մի նախագաղափար ունեցել է աչքի առաջ՝ գժուար է որոշել, ինչպէս առհասարակ ամբողջ ձեռնարկութիւնը այնպէս և ի մասնաւորի հայրերից յառաջ բերած հատուածները, որոնց մէջ բացի մեր հրատարակածից կան նաև ուրիշները շատ հետաքրքրական, մանրամասն հետազօտութիւնների կարօտ են և ընդարձակ ուսումնասիրութեան նիւթ: Բացի Հին և Նոր կտակարանի գրուածների պատճառներից՝ այստեղ կան նաև բացատրութիւններ փիլոնի գործերի, Գրիգոր Աստուածաբանի, Բարսեղ կեսարացու և Գրիգոր Նիւսացու երեսնաչափ ճառերի, Գիոնեսիոս Արիսպագացու, Եւագրի, Գաւիթ Անյաղթի հեղինակութեանց մասին, կենսագրական տեղեկութիւններով հանդերձ, որոնց իսկական արժէքն ևս գժուար է առայժմ մեզ որոշել: Թէ ի՞նչ տեսակէտի ներքոյ այս գրուածքները օ. Գրքի հետ կապուում են և ինչո՞ւ նոցա տարբերութիւնը ցոյց աւալու համար յայն, և մուրբ բառերն են գործածուում * նոյնպէս ուսումնասիրութեան առարկայ է և կապ ունի այն խնդրի հետ, թէ ի՞նչ գաղափար են ունեցել մեր հայրերը կանոնի մասին զանազան ժամանակներում՝ ո՞ր գրքերն են կանոնական համարել և ո՞րը տարականոն:

Կ. Վ.

* A. Harnack—Geschichte der Altchristlichen Litteratur. p. 364.

** Բառացի, միայն կէտաղբութիւն ըստ իմ ըմբռնման:

*** Տես. Զարբանաւեան. Նոր Մատենագրութիւն, եր 248:

**** Տես. Հայկական հին դպրութեան պատմութիւն. Բ. տպ. եր. 733:

* Այդ բառերը գործ են ածում նա եւ Մեխիթար Այրիվանեցին եւ ուրիշները: